

20 Փարա

Նամակ կամ որ եւ իցէ գրութիւն պէտք է ուղղել
ԱՌՏՆՈՐԵՆՈՒԹԻՒՆ
Ծ Ա Ղ Ի Կ Շաբաթաբերքի
Կ. Պոլիս, Լեւոյ Զապիէի փողոց թիւ 61
ՇԱԲԱԹ Կ. ՊԵՏԻՊԵՐԵՆԻԱՆԻ տպարանը

درعليهده اسكي ضبطه سوقاغتند نومرو ٦١
(نشان بربريان مطبعه)

Direction du Journal ZAHIK
Constantinople rue Eski Zapitié No. 61
chez M. NICHANJ BERBERIAN



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Քաղաքական, Գիտական եւ Գրական

20 Փարա

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ			
Կ. Պոլսոյ	Համար	տարեկան	20 դրոշ
Կաւաւներու	»	տարեկան	30 »
Ստոր երկրներու	»	»	8 ֆրանք

(Թղթատարութեան ծախքը Մարտի վարդաթեան
կը պատկանի :

Տնօրէնութեան ուղղուած գրութիւնք եւ չեն
տրուիր :

Ազգերը կամ բերանացի եւ կամ նամակով կը ու-
կարկեն :

ԹԱՆԵՑԻՔ

ԵՒ

ԹԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՔ

Մեր Ազգային վարչական մարմ-
նոց վերջերէն մին ալ թաղային այն
մշտնջենական վեճերն են, որոնք ա-
մէն կողմէ լսելի կ'ընեն իրենց մի-
ութեան, ձայնը և որոնց մէջ տգիտու-
թիւնը իբր պատճառ մեծ բաժին
մը ունի :

Մեր մէջ՝ ընդհանրապէս՝ ընտ-
րուած թաղականներէն մէկ մասը
ներքին անհամաձայնութիւններէ և
արտաքին չարախօսութիւններէ վը-
հատեալ՝ օրինական պայմանաժամը
չամբողջացուցած կը հրաժարի, իսկ
չհրաժարողներէն շատերը և անոնց-
մէ կամայ կամայ պարզ թաղեցիկե-
րը անձկանօք կը պայտսեն օրինական
դադարման :

Երբ այդ ցանկալի ժամանակը
հասնի, թաղեցիկները երբեմն ու-
սանաներով ընտրուել թաղական-
ները իրենց սուր ու խայթող լեզու-
ներով՝ փնտրել են ետքը, մէկդի
կը թողուն զանոնք և վերստին, մի և
նոյն յայտերով մի և նոյն ոգեւորու-
թեամբ լցուած, կ'ընտրեն նոր մը,
զայն ալ օր մը իւր կարգին հինցած
զգեստի պէս մէկդի նետելու հա-
մար :

Իրաւունք ունի՞ն Ազգին աշխա-
տաւորներուն հետ այսպէս վարուե-
լու :

— Այո՛, և ո՛չ :

Իմ կարծիքով, վարչութիւն մը՝
կ'ուզէ մեծ ըլլայ, կ'ուզէ փոքր՝ իւր
ըրած սխալներով միայն իւր գիւրջը
կրնայ խախտել, բայց թաղ. խոր-
հրդոց անկման այս բնական պատ-
ճառէն զատ, աւելի զօրաւոր պատ-
ճառ մ'է թերեւս ժողովրդային տը-
գիտութիւնը :

Ընտրանքներուն մէջ կը գտնուին
այնպիսիներ, որոնք այդ պաշտօնին
կամ անյարմար են և կամ բոլորու-
մին անարժան ինքն և այս բանին պատ-
ճառը նոյն իսկ թաղեցիկներն են, ո-
րոնք իրենց քուէները արժանաւոր-
ներուն տալ չեն գիտեր :

Հայ ժողովուրդը, երեսուն և վեց
տարիներու երկար շրջանի մը մէջ,
չտալիքեցաւ տակալին իւր թաղային
գործերը մատակարարելու հոգը կա-
րող անձանց յանձնելու լաւագոյն
միջոցը. շատ անգամ իւր քուէն կու-
տայ այնպիսի անձի մը, որ բոլորու-
մին անժանութ է իրեն, մի միայն թե-
րադրութեամբ երրորդի մը, որ կամ
սխալ համոզում ունեցող կուսակից
մըն է և կամ արքանական է թեկնա-
ծուի մը :

Քանի որ թաղեցիկն որովք ցո-
րենէն դատելու եղանակը չգիտեր
տակալին, ո և է նորընտիր թաղա-
յին խորհուրդի մը մէջ պիտի սպը-
ղին բնականաբար տգէտ, անկիրթ
և հրէական խաղաղութիւններով
սնած մարդիկ, որոնք ոչ միայն թա-
ղին օգուտ մը պիտի չունենան, այլ
և իրենց ընկերներուն աչքին առջև
իսկ պիտի յանդգնին քաղցնելու
ճարտարութեամբ մը չորթիլ եկե-
ղեցւոյ հասցիներէն ու մատակա-

րարութեան ծախքերէն խոշոր մաս
մը :

Մեր ըսածը ձրիամբաստանութիւն
մը չէ՝ ամէն մարդու գիտցած բանն է
թէ զեղծումը միշտ մուտ գտած է այդ
բարոյական հաստատութեանց մէջ,
Ասոր առաջին առնել ժողովուրդին
ձեռքն է. ինքն, եթէ ուզէ, կըր-
նայ լաւ ընտրութիւն մը ընել միշտ,
միայն դանգատիլը բաւական չէ,
գանգատանաց առիթ չտալու ալ աշ-
խատելու է. մինչեւ ցարդ եղած
զեղծումներուն մէջ ուրեմն ինքն ալ
իւր բարոյական պատասխանատուու-
թիւնն ունի :

Թաղական խորհրդականութիւնը
գիւրքին բան չէ. կարծեա՞ծէն շատ
աւելի փափուկ պաշտօն մըն է այն.
զայն կատարողը ոչ միայն պարկեշտ
պէտք է ըլլայ, այլ և բաւական բա-
րոյական քաջութիւն ունենալու է
չարախօսութեան երկհիղ լեզուէն
չլիսնալու համար. բաւական տըն-
տեսագէտ ըլլալու է, որոշեալ եկա-
մուտով մը կարեւոր ծախուց գի-
մադրաւել գիտնալու համար, և քիչ
շատ ալ գրոց աշակերտ ըլլալու է,
վարժարանաց լեզուէն ըստ կարի
հասկնալու համար. այս յատկու-
թիւնները չունեցողները թո՛ղ առա-
ջին օրէն իսկ մերժեն իրենց առա-
ջարկուած պաշտօնը : Մեզ համար
ալ անցած է այն ժամանակը, ուր
ժամացոյցի ոսկի չլիցայ ունեցողնե-
րը միայն թաղական ըլլալու յարմար
կը դատուէին :

Հարկա հասարակաց եւ պաշխա տը-
ժանաւորաց :

ԵՐԿՈՒ ՆԿԱՐՆԵՐ

Հոս կորած արձանիկ մը, հոն հին
քանդակ մը, մերթ ժանգոտած գրա-
նի, և նոյն իսկ աւազի հատիկ մը միտ-
քը կը տանին դէպի քաղաքակրթութեան
առաջին աղբերակները. որովհետեւ կը
մտածենք թէ թերեւս այդ կորած
արձանիկը թերաւ մ'էր, որ պաշտուե-
ցաւ սերունդէ սերունդ, կարելի է այդ
հին քանդակն ամենէն փառաշուք յի-
շատակարանի մը բեկորն էր, այդ ժա-
նգոտած գրահն, ո՛վ գիտէ, ո՞ր դիւ-
ցազին կուրծքը կը պատէր, այդ աւազի
հատիկն ալ այն աւազներէն էր թերեւս,
որոնց վրայ Մովսէս քաղցը :

Շատ լաւ դրութիւն մ'էր ուրեմն
այն, որով Բիւզիէ բնապատուումը նա-
խաջրէնդեղեղեան կենդանիի մը մէկ ոսկո-
րով անոր մեծութեան չարիքը գտնելու
է. ինչ որ ճշմարիտ է հեռաւոր յի-
շատակներու համար, աւելի իրաւամբ
ճշմարիտ է այն՝ մօտաւորներու համար.
Ի՛նչ հարկ միայն թարթափել հնութեան
մուշկն մէջ, ահա թու աշբերուդ առ-
ջեւ դրուած առարկայ մը գաղափար-
ներու զուգորդութեամբ՝ չիղաղեցնել
միտքը այդ առարկային հետ վերաբե-
րութիւն ունեցող բոլոր պարագաներով :

Այս մտածմամբ դիտեցէ՛ք սա պատ-
կերները, գեղարուեստական զոյգ մը
գոհասներ՝ որոնք դրուած են Դպրոցա-
սէր Տիկնանց վարժարանի մէկ սենեկին
մէջ, որուն ամբողջական զարդին համար
անեղք բաւ են, որուն քով կ'անշտան
իսկ ամենէն չբեղադարձ դահլիճներ,
հիւրասենեակներ իրենց թաւիշներով,
անդուսներով և ծանրագին գորգերով,
և այդ բոլոր ճոխ դահլիճները պիտի
նախաձեռնեն այն միակ սենեկին վրայ, որ
այդ երկու նկարներն ունի, որուն ներ-

քեւ մատաղ սերունդներ կը յանձնեն
իրենց ուսանողի երազները և առաջին
հասակի քաղցրութիւնները :

Երբ կը դիտեմ այն չքնաղ նկարնե-
րը, որոնք Այվազովսքիի նկարչական
ճարտարութեան մէկ մէկ հաւաստիք են,
միտքս կը ընչի այդ հոյակապ արուեստ-
ագէտին յիշատակներուն մէջ. ո՛հ,
արուեստի այդ մեծագոյն ներկայացու-
ցիչը, այդ վարպետը ի՛նչ անմասն դի-
տող մը եղած է բնութեան, անհուն
ձգողութեամբ մը հոգիին խորը ինչպէս
լուսանկարած է ան ծովուն զանազան
տեսարանները, երեւակայութեան բո-
լոր թափով ինչպէս ըմբռնած է հրա-
շալին և վսեմը :

Հանճարի ամենէն լայն ըմբռնումով,
արուեստի կորովաբար տեսութեամբ լու-
ծած է յաջողութեան առեղծածը և իւր
վրձնոյն տակ մի քանի գոյներ, մի
քանի գծեր եղած են հրաշակերտներ :

Եւ անկա միշտ վեր, միշտ բարձր
պիտի մնայ՝ մեծերու այն բազմաստե-
ղաց մէջ գրաւելով իր տեղը, միշտ հիւս-
ցողիչ և միշտ սիրալից՝ Յիւրալի ի՛նչ
պարզեւ մ'է հանճարն, այդ անմասն
թափանցումը մեծութեանց և վսեմու-
թեանց խորքը :

Կը մտնեմ միանգամ հոս արուեստ-
ագէտի անձնուով և հիացումով չա-
ցած՝ հոյակապ նկարչին առժամայա աշ-
խատանքը, կը տեսնեմ զանի պարզով
տարազով նկարչի, որ ձեռքի արագ
չարժաններով շատ շուտ կը պատկերա-
ցնէ գեղեցիկ տեսարան մը, յափտա-
կութեամբ կը հարցնեմ, զի՛նչպէս շուտ
կը գծէ, վարպետ, կէս ժամ չառեցա՛ :

— Կէս ժամ, կ'ըսէ, դուք կը կար-
ծէք թէ կէս ժամու մէջ չինքնի այդ
պատկերը. սխալ. ես քառասուն և
հինգ տարիէն ի վեր չինքնի զայն :

Եւ այս կարճ խօսքով կը յայտնէ
իր անձնակիւ և յարատեւ աշխատու-
թեան ոգին :

Արուեստի այդ մեծ մարդը ի՛նչ խո-
նարէ և հեղաճամբոյր ալէ միանգամայն,
այնպէս որ չքնաղ նկարագիր մը կը գնէ
արուեստներն, որոնք ինքնեկ հա-
րստութեան մը տիրացած՝ իրենց մի-
ակ դրաղում ըրած են կառքերով շը-
րջապալի Բերայի մեծ պողոտային վրայ,
կամ գարեջրատուները զարդարել՝ ի-
րենց ճոխագոյնս և ուռուցիկ անձնա-
բորութիւններով :

Եւ մարդ կը զայրանայ իր ժամանա-
կին դէմ, ուր շատեր իրենք զիրենք ե-
ռամոլութեան կուռքեր կ'ընեն և կը
թափն պաշտուելու իրենց գոյնը արժա-
նիքներուն համար :

Ո՛վ ժամանակներ, ո՛վ բարեք :

ՍԻՄՈՆ ԳԱՍԻՄՍՅԱՆ

ՇԵՏՏՈՒՆԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Տեղական թերթի մը մէջ կարդա-
ցինք, թէ Բերայի Յունաց աղջկանց
վարժարանին վերջերս կատարած մրցա-
նակարգութեան հանդէպին մէջ, ո-
րուն նախադասած է Ս. Անթիմիոս Պատ-
րիարք, խրախույսի եւ յատկապէս իմու-
թեան ընտիր օրինակ մը տրուած է, ո-
րոյ մասին արժան և կը համարինք քանի
վրջը ընել հոս :

Տ. Անթիմիոս Պատրիարք, յիշեալ հան-
դէպին մէջ տարեկան 300 ֆրանքի պար-
գեւ մը խոտաւած է այն աշակերտուհի-
ւոյն, որ կարող կըլլայ խիտ լաւ կեր-
պով նկարագրել տիկնոջ մը պարտաւո-
րութիւնները, ինչպէս նաև Հիւսէքի ա-
ռաջնորդն ալ կը խոտաւայ տարեկան
100 ֆր. վարձատրութիւն մը այն օրի-
որդին, որ եկեղեցւոյ վերաբերեալ ո՛ր

և է ձեռագործ դարձ մը արուեստա-
գիտական ճաշակով կարենայ բանիլ :

Դիւրին է երեւակայել հիմայ, թէ
յիշեալ վարժարանի աշակերտուհիները
ո՛րքան պիտի կրկնապատկեն իրենց ջան-
քերը. ասկէ ո՛չ թէ պիտի օգտուին Եկե-
ղեցին կամ Պատրիարքը, այլ ուղղակի
իրենց եւ իրենց հետ մէկտեղ ամբողջ
ապագայ սերունդ մը :

—

Ահա՛ ընտիր օրինակներ, որոնց պէտք
էր հետեւէնք մենք ալ. սակայն ցա-
ւալի է որ, մինչեւ ցարդ չ'ենք ունե-
ցած բարձրատիւնան եկեղեցականներ,
որ գոնէ տարին մէկ անգամ վարժարան
մը այցելած և այս տեսակ խրախուսիչ
գործ մ'ըրած ըլլան, ինչպէս նաև չ'ու-
նինք հարուստներ, որոնք՝ գոնէ ամիսն
անգամ մը՝ մարդասիրական պարտաւո-
րութիւն համարեն իրենց այցելել աղ-
քատիկ վարժարան մը, և բարոյապէս
ու նիւթապէս քաջալերել աշակերտ-
ները :

Մեր հարուստներուն մեծագոյն մա-
սը բոլորովին անփոյթ են կրթական
գործին. Արդէն անոնք, իրենց զաւակ-
ները մասնաւոր վարժարանաց և կամ
այցելու ուսուցչաց յանձնած ըլլալով,
գոնէ թաղային վարժարանաց բարե-
կարգութեան և կարօտ ուսանողաց յա-
ռաջդիմութեան համար վայելեան մը
իսկ խորհիլ չեն ուղեր : Երբ կը մտա-
ծենք թէ՛ ապագայ սերունդեան մը բար-
եւոք դաստիարակութեան համար պէտք
էր՝ զոչնչութեան իւրեք շատ չնչին
բաներ են անոնց համար, դառն տպա-
ւորութիւն մը կ'ունենանք տեսնելով որ
մի և նոյն տղայքը, թո՛ղ ըլլան յոյն
կամ հրեայ, կարծես մասնաւոր ձախ-
տագրով մը օժտուած, կը վայելեն ո՛չ
միայն ամեն տեսակ ձեռնտուութիւն-
ներ, այլ նաև մեծամեծ բարիքներ եւ
նոյն իսկ շատ անգամ ապահով ապա-
գայ մը :

Արդեօք ո՛րքան տարօրինակ պիտի
թուին մեր խօսքերը այն կարգ մը հա-
րաւանքներն, որոնք՝ ինքնեկ հա-
րստութեան մը տիրացած՝ իրենց մի-
ակ դրաղում ըրած են կառքերով շը-
րջապալի Բերայի մեծ պողոտային վրայ,
կամ գարեջրատուները զարդարել՝ ի-
րենց ճոխագոյնս և ուռուցիկ անձնա-
բորութիւններով :

—

Այսօր ունինք շատ վարժարաններ,
որոնց մէջ հազարաւոր ուսանողներ կան,
զուրկ դաստիարակ ամեն պիտոյքէ, որոնք,
յարգելու համար կարծես վաղեմի սո-
վորութիւնը, կերթան ու կուգան իրենց
դատարկ պայուսակներն ընդ առնել,
ինչպէս և իրենց պարզ նախաճաշը ի ձե-
ռու... Անոնք բնութեան խորթ զա-
ւակներն են, զրկուած ամեն առատա-
ձեռնութիւններէ և իրենց մատաղ տա-
րիքին մէջ ճակատագրին դառնութիւն-
ները կը վայելեն շարունակ իրենց
զանոնք ուղիւ, անոնց տոգոյն դէմքն ու
անորոշ քաղցածքը. մատաղատի ծերու-
նիւնք արդէն կարծէք դանդաղ, ձանձ-
րացած պարէն այդ կենքէն : Այցելե-
ցէ՛ք անոնցմէ մէկ քանիկն բնակարանը.
պիտի տեսնէք խալցին խոնաւ ու մութ
գեղեցիկները, ուր անկողինը խշտեակ
մըն է յաճախ, եւ ո՛րչափ բազմաթիւ
են անոնք, որոնք օրական չեքտ մը չոր
չաւ և քանի մը ձիթ ապուտուլ ունին մի-
այն ուտելու : Այս խեղճ անուշաղով ապ-
րող թուաւ փոքրիկներէն մենք տա-
կաւին սուր միտք ու յառաջդիմութիւն
կը պատկենք... :

Ի՞նչ դիման ասոնց վրայ մեր հա-
րուստներն ու օգնեն անոնց : Իսկ եթէ

չեն ուղեր ընել այս բանը ու չը պիտի
ազդուին այն դասերէն, զորս օտար
ազգերն ամեն օր ու ամեն ժամ կուտան
իրենց, թո՛ղ չ'ընեն այլ եւս կրկնել
մեզ այն յաւիտեական դանգաւար թէ
«Մեր քաղ. վարժարաններն արդիւնք չեն
ստա» . պէտք է միանգամ ընդ միշտ հա-
կընան թէ մեր վարժարանաց անրարե-
կարգութեան ու յետամնացութեան
պատճառներէն մին և զօրաւորագոյնը՝
ուսանողաց մեծ մասին ԱՂ. ՔԱՏՈՒԹԻՒՆ
է, որ կ'արգելու զանոնք յառաջդիմու-
թեան ամեն միջոցները հայթայթելէ :

ՏԻՊԱՆ ՇԱՆՆԱՆ

Բերա

8 ապրիլ 96

ՊԱՏԱՌԵՆԵՐ

ԱՄԵՐԻԿԱՆ ԱՐԻԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՆՇԱՆՕՐԸ

Ամեն անգամ որ կ'երթայի Նիու-
Եօքի նաւամատոյցը սովորական պը-
տոյտս ընելու անցնելով թափառայած
վտիտ տարաբաղունքու երկար բազմու-
թեան մը մէջէն, զոր Հին աշխարհը ա-
մեն օր կը զրկէ Նորին, տխուր ու վը-
տաբեկ նայուածքով մը միայն կը դի-
տեսի այլազան տարրերէ կազմուած այդ
ամբողջը, որ կուգար ձուլուելու թը-
ուառութեան մեծ հնոցին մէջ, իհիստ
և ամպէ երազներու մէջ փայփայուե-
լով : Շատ անգամ քուլէս կ'անցնէին
պատուած տափառով երկուստեքներ,
ձեռքերնին ծակ պայուսակ մը բռնած,
որոնք թերեւս պիտի երթային Մայրա-
քոյն Արեւմուտքի անձայր դաշտերուն
մէջ փառելու, կամ նեղ ու ցած գոր-
ծատեղիներու մէջ շնչելու քարածուխին
իւղտ ու լափիչ մուկը :

Օր մը, բանի մը արտմտած ըլլալով,
բիշ մը տեղի կանուխ դացի Miseries,
Homey՝ ինչպէս սովոր էի կոչել այն բը-
նակարանը, ուր պանդուխտներ քանի
մը ըսպէ կը հանգստանան ցամաք եւ-
լելէն վերջը :

Կիսատուեր անկիւնի մը մէջ կծկը-
ւած էր մարդուկ մը, խոշոր ու անխը-
նամ մօրուքով, որ պայուսակէն դուրս
թափելով քանի մը գրքերու հետ
խաղաղութեան երեւոյթ ունէր : Քիչ մը մօ-
տեցայ իրեն, առանց ուշադրութիւն գը-
րաւելու : Զարմանքով այդ մաշած գը-
րքերուն վրայ Սթենլիի, Հեյլսիի եւ
Շրքաւսի անունները կարդայի : Զար-
մանքս աւելի շուտացաւ, երբ այդ հին-
ցած գրքերուն մէջ տեսայ իմ ալ «Վը-
րօնի» ծագման փիլիսոփայութիւնը, զոր
բիշ մը չափազանց եռանդով գրած
էի ատենաօք : Համակրութիւնս աւելի
չարժեցաւ անդադալալիցիի այդ զաւ-
կին վրայ, զոր բազմը յանկարծ դէմս
կը հանէր, իմաստասիրական ստուար
հատորներով ծանրաբեռնուած : Անմի-
շապէս ուղեցի գիտնալ թէ ո՛վ էր այդ
մարդը : Երկու ժամի չափ իր քով նըս-
տայ, բայց երբէք պատճառ մը չի գտայ
հետը խօսելու : Խորհուրդներու մէջ
թաղուած կ'երեւնար : Վերջապէս ուս-
տիկանը եկաւ և անցաւ իմ հարցուցած
ատեն, որ պատճառ մը կը ծանշնայի
ոստիկանը : Բարեկէյ յետոյ զայն, եւ
ալ նայուածք մը նետեցի անցադրին
վրայ, որ մամի գոյնով ներկուած էր
կարծես : Անունը՝ Բօնէն էր : Գերմանա-
ցի : Արուեստի... փիլիսոփայ :

— Կը ներէ՞ք, Պ. Բօնէն... :

— Չէ՛, չ'եմ ներք... :

Ու սկսաւ քաջ քաջ խնդալ. Ապա

— Ինչ ընդհին, ծառայողներն ալ զբոսնում են էլտիվները ներս չը քաշուի տեղի հանելի էին:

Տիկին Բեքրովն աղջկանը ցոյց տուած տիկնոջ ուսին դառնալով ըսաւ.

— Փոքրուհի հանրամ, քիչ մը օտքդ վեր կ'առնեն, Զարուհին էլտիվներն վրայ կ'սկսէր ես...

— Հեռու ըլլայ, հանդարտ միտքով աղջկան ալ չեն թողուր, ըսաւ տիկնոջ անհամբերութեամբ:

— Հիմա տուն ալ օտքդ դիւրաւ կ'առնես...

— Էրեւանը տեղ կայ օր ծոխի էլտիվները տամ:

— Էս կը ծոխի կ'առնեն, քեզի ինչո՞ւ զանգի՞ք ըլլայ:

— Կրնաս ծոխի նէ ծոխ առ:

Տիկին Բեքրովն քովինները հրմտելէ սկսաւ, որպէս զի կարենայ գետին ծոխի ու ձեռնոցը գտնել, ահա այս հրմտումէն բոլոր տիկնոջն ձայները բարձրանալ սկսան:

— Քա ճանըմ, ինչ պիտ տեղիւ վըրաս կ'ընես, ըսաւ հայտնի չէս կրնար կրկնալ:

— Ընողը ե՞ս եմ, ետեւեւս կը հրեն կոր...

— Նալիք ըլլայ, կիւղէլմ աղջկան գիրքին խառնուրդ պատեցաւ:

— Տուն ալ աս խառնուրդին թող միտքդ աղջկանը:

— Անիկայ քեզի չեն հարցունք:

— Մեղայ, աս ինչ խառնուրդին է. ժամկոց մըն ալ չիկայ քի կայ տէ սըվտեղը սըրային տնէ:

— Քա ան չէ ամա ինչ կայ, ինչ կ'ըլլանք կոր:

— Ես ինչ կ'ընամ, էլտիվներ մը թէք խալիպ էղեր է ան կը փնտռեն կոր:

— Տեսչներ, էլտիվներ մը համար աստար հոգի տապաւնի պիտի լը վայլէ:

Վերջապէս տիկին Բեքրովն, բոլորովին քրտնալիք, ձեռնոցը գտնալէ յետոյ կտրած, շտիպեցաւ ու այս տիրոջ ժըխորն ալ դադրեցաւ:

— Մայրիկ, էլտիվներն թէք չը կըրցի՞ր գտնալու:

— Հիմա էլտիվներ ալ կ'ընեն, քեզի ալ, հոգիս պիտան էկաւ:

— Հոգի պիտ մընք, ասնիկ, ըսաւ Լուսինա հանրամ օրիորդ Զարուհին, ժամէն ետքը ժամկոց ախպարներէն մէկուն կ'ընենք, կը փնտռէ կը կտնայ:

— Քա ան խառնուրդին կ'ոսկրտուռեցաւ կնաց, ըսաւ տիկին Բեքրովն, նախիմ իրիկուան հօրը ինչ ճուղապ պիտի տայ:

— Աման, տուն ալ, թող ինչ օղ ըլլայ, էլտիվներն լաւաբար կ'ըլլայ:

— Կ'ըսես ամա քուրուկ տաճա նոր մէծիտէն մը տրուեցաւ, էրիկ մարդ է, լսէ նէ հէկէթ խորապանի կ'ըլլայ:

— Երեւանը փէսիս թափալէթը ատ թարափէն շատ աղէկ է:

— Քա նայէ, փեսատ ըսիք տէ պան մը պիտի ըսէի, քիչ մնաց որ մոտենայի, հապա մարդուն կ'ընէ խեղճ կը թո՞ղուն օր:

Հիմա նայէ զործը ինչ է. Զարուհին արեւմտեան ճիւղին վրէպ խառնուրդին անհամբերութեամբ փնտրելով թէք կը սէպէ էղեր:

— Հասկցայ, տուն աս գործը ինչ կ'ընէ:

— Երեւանը փէսիս թափալէթը ատ թարափէն շատ աղէկ է:

— Սուտը ինչ է, ան ալ ըսէ որ տեղին ի տեղը հասկուցունք:

— Գիրքները ան անանկի խոսկալ մը ունի որ, օխտ մահալէ անդին կը լսուի:

— Հեռուներ ըլլայ, սա նայէ, կիւղէլմ մարդուն կ'ընէ խառնուրդին պիտի էրիկներ:

— Իման տէ չի չիմ կ'ընէ ամա, հիմա Զարուհին քան հատ Զարուհին արեւմտեան ճիւղին վրէպ խառնուրդին անհամբերութեամբ փնտրելով թէք կը սէպէ էղեր:

— Արեւը սիրեմ խոսկալ կ'ընեն, ան ո՞ւր, ան ուր:

— Արեւը չիկայ, սէպէ քի քուղաւակ է:

— Ես աս գործը չը ընեցունք նէ ինչ ծի ալ Լուսինա չըսէ, կալ կ'ընէ փնտրելու, աս մարդը կ'առնէ տուն կը պիտէ, տուն ալ օ տէ յիտուն Զարուհին հետ մեզի կուգաւ, ըստոր ըլլայ նէ ատ մարդուն զինքը չէլիւ կ'ընենք, տուն հոգի պիտ մընք:

— Հէմէն Աստուած լսէ ծանդ:

— Մայրիկ, թափորը դուրս կը հանեն կոր, առաջ անիկը քի տեսնանք:

Թիւրքի ալ եկեղեցական բոլոր արարողութիւնները վերջացած ըլլալով, յուղարկուողութեան թափորը՝ խոսուն բազմութեան մէջէ՝ եկեղեցինէ դուրս կը հանէին:

Միջոցեւ ամեն կողմէ, եկեղեցեաց մէջ կանանց հագուստի պարզութիւն կը քարոզէր, աղջին կարգ մը տիկնայք եկեղեցիներու դռներէն մտերմական տեսակցութեանց ժամադրութեամբ ըրած են, ուր շատ անգամ այսպէս տեսնէր խորհուրդներ կը կազմակերպուին:

Յ. Մ. ՀԱՃԵԱՆ

ՄԻԱՄԻՏ ՀԱՐՑՆԵՐ

— Մագրի գիւղի հրաժարեալ Թաղ. Խորհուրդը ինչո՞ւ համար հայիւ չէ տրուած ցարդ:

— Տակաւին Հոգաբարձութեան պաշտօն վարելուն համար:

— Ինչո՞ւ համար Հոգաբարձութիւն մը ուսուցչաց յարգը չի ճանչնար:

— Գրպանէն դրամ չհանդրապէս համար:

— Ինչո՞ւ համար ուսուցչուհիք քիչ են ու ուսուցիչը շատ:

— Իրողութեան ուսուցչուհիք կէս ճամբէն փախուսելու հետեւ:

— Ինչո՞ւ համար ուսուցչաց վաստակը աչքի կը զարնէ:

— Առանց դրամագիրի ըլլալուն համար:

— Ինչո՞ւ համար աղջիկները ձեռագործ կը սորվին:

— Տանը մէջ խրախուրդ չընելու համար:

— Ի՞նչ բանի կը ծառայէ աղջկանց ֆրանսէզէն սորվելը:

— Խօսակցելու (°):

— Ինչո՞ւ համար սիկար կը ծխենք:

— Ախորժակին գոցելու համար:

— Ինչո՞ւ համար շատ մարդիկ օղի կը խմեն:

— Գիրքերը չունենալու համար:

— Ինչո՞ւ համար գաղթ վիզիքները իրենց յարգը կորսնցուցին:

— Գործածելու կերպը մոռցուած ըլլալուն համար:

— Ինչո՞ւ համար խեղ մը երիտաւարները հայր ըլլալէ կը վախնան:

— Իրենք ալ հօր մը կարտ ըլլալուն համար:

— Ա. Պոպանիկի խեղիները ինչո՞ւ կը լուծուին:

— Լուծողակցով:

— Ինչո՞ւ համար ամէն տարի չըլլա՞ց գետններուն մօտէն կը փոխուի:

— Հինալը յայտնի չըլլալու համար:

— Ի՞նչ շատ միասակար չէ ոգեկից ըմպելեաց մէջ:

— Զուտ օղին:

— Օղին քանի՞ք ոգեւորէ քաւաթն է որ կ'աղէ:

— Վերջին գաւաթը:

— Ե՛րբ հարուստը աղքատի կ'ողորմի:

— Հոգին հանելէն ետքը:

— Ե՛րբ մարդիկ պահէ կը բռնեն:

— Միտք սուղ եղած ատենը:

— Ի՞նչ է որ Ամերիկայի մէջ ծնած չէ Ամերիկայի մէջ կ'ապրի:

— Խաւաքի երես շտեմնողը:

— Այս հարցումները ընողը ո՞վ է:

— Պատասխանողը:

Յ. Պ.

ԱՌԱՅ ԵՒ ԱՂԵԿ ՔՈՆՏԵԼԱԿԱՆ ՋՈՒՌՈՒՄՆԵՐ

Հետեւեալ կերպով կրնաք պատրաստել սոյն պատուական հեղուկը:

Կիրտին ոգի (սէտաւ) 6 կրամ
Պէպտիկ ոգի 6 »
Խնձորի ոգի (սոսմալ) 6 »
Նարնջեղ ծաղիկ ոգի 2 »
Միտակի ոգի 8 տէսիկրամ

Մէկոյ և յանպարի գոհոյ (թէնթիւ) 8 »

Կնդրուի գոհոյ (պանթուէն) 6 »

Ալքոլ 90° 90 սանթիլիտր

Ջուր 200 (օտիսիլի) 20 »

Ոգիները և թէնթիւները ալքոլին մէջ լաւ մը լուծէ, յետոյ զտեալ ջուրը վրան լեցուր և խառնէ բաղադրութիւնը: 12 օր այս վիճակին մէջ կենալէ յետոյ, թղթէ անցնելով զտէ, 10 օր կեցած միջոցին, պէտք է ամէն 24 ժամը անգամ մը խառնել հեղուկը:

ԿՈՆՏԵԼԱԿԱՆ ՆՈՐ ԵՒ ՄԱՔՈՒԿՈՒ ՊԱՇԵՆ

Այն կօշիկները որ երկար ժամանակ չպիտի գործածուին և կ'ուզէք նոր ու մաքուր պահել, ծեփեցէք զանոնք հետեւեալ բաղադրութեամբ:

1 մաս կիտիւն, 2 մաս մօրիւ ձկան իւղ, 1/2 մաս դաւան նուշի իւղ:

Ասոնք պէտք է իրար խառնել և յետոյ ծեփել կօշիկները, և երբ զանոնք գործածելու ուզուի կապուղ լաթով մը պէտք է սրել:

ԱՌԱՅԻ ԱՓՈՅՆԵՐՈՒՄՆԵՐ ԱՐԱՅՆԵՐԸ ՀԱՆՆԵՐ

Շատ անգամ կը պատահի որ անուշի փայլուն և ծաղիկներու ափսեներուն վրայ օղի, քօնեակ կամ որ և է ալքոլիք նիւթ պարունակող ըմպելի մը թափելով, ձերմակ և լայն արատ մը թողու. արդ, այս արատը հանելու համար բաւական է 2 մաս քարիւղ և 1/2 մաս բեւեկի ոգի (էսանս տր թէրէպէնթին) իրար խառնելով, և կապուղ լաթ մը թղթելով այս բաղադրութեանը մէջ, ուսով մը քանի մը անգամներ քսել ձերմակեղ և տեղեւանքը. այս կերպով շատ դիւրութեամբ կը մաքուր և նկարներուն վրայ եղած փայլն ալ չի կորսուիր:

ՄԼՈՒԿՆԵՐԸ ԶՆՁԱՆԻ ԼԱՍ ՄԻՋՈՑ ՄԸ

Նորէն հասաւ այն ժամանակը՝ որ միւլները օղին տաքութեամբ հետ պիտի նեղեն մեզ. թէ և կան միջատասպան փոշիներ, բայց անոնք ալ իրենց անարմարութիւնը ունին, մարդուս անողութեանը նկատմամբ. ինձ համար ամենէն յաջող և լաւ դեղն է մի և նոյն քանակութեամբ նափթի իւղ ու քարիւղ իրար խառնելով, ուր որ կայ թղթի ու կ'ուզուի հոգնէ սաստիկ կը գործեն ու կ'ոչնչանան:

Քաղաքական լուրեր

Թէ և վերթոր էմանուէլի յաջորդին կառավարութիւնը Ատիկրատի բերդը պաշտպանելու ծրագրին վրայ ո՛ր է քաղաքականութիւն մը տալ չուզեր, բայց բանակատեղէն հաղորդուած լուրերուն նայելով՝ վերոյիշեալ բերդը ձեռքէ չհանելու համար մօտալուտ արշաւանք մը պիտի կազմակերպուի:

Արշաւող բանակը՝ Հէօշ, Մէյնօ և Վալլէս զօրավարաց հրամանատարութեան ներքեւ երեք բաժնուած՝ այլ և այլ կողմերէ պիտի յառաջանայ փոստեղեակ բերդը, սակայն ոստ Մանկալա, որ ժամանակէ մը ի վեր որսին սպասող դարանակալ առիւծի մը պէս բերդին թով կեցած է, կուսկընդ զայն՝ Հէօշի զօրաբաժնին ընթացքը կասեցնելու համար հրաման տուած է իրեն ստորակարգեալ երկու պետերուն կերբերան աշարժութեամբ հսկել Ատիկրատին Ատիկրատ տանող ճամբան:

Այս լուրը պաշտօնական չըլլալուն, վաւերական հանգամանք մը չունի, բայց եթէ ստույգ իսկ ըլլայ, ըստ մեզ Պաշտօնապաշտպան իւր նախորդին աւելի ուղղական տալանքը չցուցնէր, որովհետեւ չենք կարծիք որ անձրեւեաց եղանակին մէջ իտալացիք չարքաշ Հապէշաց հետ

չափուելով բան մը ձեռք ձգեն:

Սպարապետը աւելի աղէկ կ'ընէ, Ատիկրատը իւր ճակատագրին եթէ թողու, բանակին բարոյական բարձրացնել ջանալով և անոր առողջութեան հոգ տանելով ժանտատենդը, պատերազմներու այդ անբաժան ընկերը, թիւնիկի երամի մը մէջ մտած դիվիզի մը պէս իտալեան բանակին երիտասարդութիւնը կը փնտցնէ: Երբ փոքրիկեան այս արշաւանքը այսպէս ձախողութիւններ կը կրէ, մեծ անխոհեմութիւն է փորձ և զօրաւոր թշնամու մը վրայ յարձակելով բանակը նորանոր հաւանական ձողորդութեանց ենթարկել:

Ուրիշ լուրեր կը հաւաստեն թէ Հապէշը քրիստոնէաբար կը վարուին իրենց գերիներուն հետ. սպայից սըներեւան հոգ տարուելէ զատ՝ մինչև անգամ ոմանց ձի և սպասաւոր ալ տրուած է, ուստեղ լաւաբար ծոռովողոց յատուկ սովորութեամբ երբեմն ուղեր ու դառներ կը նուիրեն անոնց:

Բարձրագոյն սպայը Հապէշ կառավարութեան մեծ պաշտօնատաւաց այցելութիւնները կ'ընդունին և իրենցմէ ոմանք կ'արժանանան նոյն իսկ Մենելիքի այցելութիւն տալու և անոր արքայական վրանին մէջ գործերու վրայ բաղմամբ՝ նորին վեհափառութեան հետ մեղադրուր ըմպելու պատուին:

Գայով հասարակ գիտություններուն, ասոնք հարկաւ մի և նոյն վիճակը չեն կրնար ունենալ, Հապէշատանի պէս աղքատ երկիր մը անուշտ պէտք եղած խնամքը չկրնար ընել բազմաթիւ գերիներուն:

Ասոնցմէ եկած նամակներէն և ոչ մին տեղեկութիւն կուտայ Ատիկրատի զօրավարին և կ'աւանտ գընդապետին վրայ, այնպէս որ ստույգ կը կարծուի այն լուրը թէ Մաքալէի պաշտպանը Սկեւոլայի և Տանտաւայի ճշմարիտ գաւկի մը պէս մեռած է:

ՀԵՌԱՊԱՆԱԼՈՒՐՔ

Պեքին. — Հօնկոնգ իշխանին ի մօտոյ հրաժարելու լուրը հերքուեցաւ:

Հոմ. — Հապէշներուն հետ ճակատամարտ մը կը սպասուի:

Վիեննա. — Ձրանց Եօշէֆ Կայսր ընդունելով զՏեք. Լիւկը, խնդրեց որ հրաժարական տայ քաղաքապետի պաշտօնէն, նոր փոփոխութեանց տեղի չտալու համար: Տեք. Լիւկը, Կայսր բաղձանքին գոհացում տալով, հրաժարեցաւ:

Բարի. — Պ. Ֆելքս Զոթի պնդման վրայ Պ. Մէլին ստանձնեց նոր նախաբարութեան մը կազմութիւնը:

Լոնտ. — Պոլսեցի պաշտօնէն եկած լուրերն երկիւղալի են. 25000 Մարապէշներ

ԿՈՐՈՒՍԵԱԼ ԿՏԱԿԸ

ՀԵՂԻՆԱԿ

Յ. Մ. ՀԱՃԵԱՆ

ԳԼՈՒԽ Ա.

ՍՍՐԳԻՆԷՆ

— Ընդհակառակը, մայրիկ, խիտ բարեխիտ վարուելով տասը դահլիսն ալ աւելի տուաւ, որովհետեւ յառաջիկայ շաբթուան համար տալու գործ չուներ:

— Ասելի աղէկ, գէթ շարափ մը հանգստութիւն կը վայելես, խեղճ աղջիկ:

— Ի՞նչ, մայր իմ, բայց ո՞չ, ո՞չ, ըսելով ինչ Գլուխիկ, ստակը կորսնցնելով մօրը խնայելով չէր ուզեր անոր ցաւ պատճառել:

— Աղջիկ, արտօր բան մը ունի որ ինձի կը պահես, կը խնդրեմ, խօսէ, ինչ պատճառեցաւ քեզ:

— Փոքրիկ դժբաղդութիւն մը, մայրիկ: Բայց մի՛ աղայլըր այդպէս, բո՛ր

լորովին չնչին պատահար մը. առած ստակներս կորսնցուցի:

— Աւա՛ղ, խեղճ գաւախ, հիմա ի՞նչ պիտ ընենք, մի՛ գուցէ խանութը թողած ըլլաւ:

— Ի՞նչ, մայր, չըլլա՞ց քանի տակի գրպանը դնել կարծելով դուրս ձգեր եմ. կանուխ գալու համար աճապարանք կամալը հասայ, տասնին չոգնեան ալ ճամբայ ելնելու վրայ էր. տոմսի մը գնելու համար երբ ձեռքս գրպանս խոթեցի, քիչ մնաց պիտի մարէի, ըստակները չի կար:

— Ա՛հ, խեղճ աղջիկ, ետքը ո՞ւր կ'ընէ քոտար տոմսակ առնելու համար:

— Բարեկիրտ պարոն մը եղելութիւնը կուսկընդ, աղնուարար տոմսակ մը առաւ, բայց նոյն պահէն չոգնեանը մնկեցաւ:

— Տէ՛ր Աստուած, յետո՞յ...:

— Հարկ եղաւ վերջին չոգնեանը սպասել:

— Այն բարեկիրտ պարոնը ո՞ւր կ'ընէ:

— Զը հարցունք, չոգնեանին չը հասնելուն կ'երեւի որ շատ վտառաւ, որուն պատճառ ես եղած էի:

— Պէտք էր ուր բնակիլը հարցնէիր որ ի հարկին տոմսակին գինը վճարէիր:

— Այնչափ աղնուար

